ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--- մայիսի 2023 թվականի №---Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի №294Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2020 թվականի սեպտեմբերի 2-ի №294Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) համաձայնություն է տվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Տերյան փողոցի 108 հասցեում գտնվող ՏԵ-38 ենթակայանը (այսուհետ՝ Ենթակայան) և դրանով զբաղեցված հողամասը «Ռեգիոն Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը առուվաճառքի գործարքով օտարելու գործարքի կնքմանը, պայմանով, որ Ընկերությունը դրա կնքումից հետո 30 ամսվա ընթացքում ձեռք կբերի նոր ենթակայանի համար նախատեսված գույքը,

բ) Ընկերության 2021 թվականի մարտի 15-ի №Ե-45-21 գրության համաձայն՝ վերջինիս և «Ռեգիոն Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2020 թվականի սեպտեմբերի 9-ին կնքվել է առուվաճառքի պայմանագիր, որով վերջինս սեփականության իրավունքով ձեռք է բերել Ենթակայանն ու դրանով զբաղեցված հողամասը, այնուհետև՝ 2020 թվականի դեկտեմբերի 11-ին «Ռեգիոն Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Ռենշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքվել է Ենթակայանն ու դրանով զբաղեցված հողամասը առուվաճառքի եղանակով օտարելու պայմանագիր, որով վերջինս ստանձնել է Ընկերության և «Ռեգիոն Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2020 թվականի սեպտեմբերի 9-ին կնքված

առուվաճառքի պայմանագրով ամրագրած պարտավորությունը, այն է՝ դրա կնքման օրվանից 30 ամսվա ընթացքում, Որոշման 1-ին կետի 1-րդ ենթակետի հիման վրա Ընկերությանը հանձնել նոր ենթակայանի համար նախատեսված գույքը,

գ) Ընկերությունը 2023 թվականի մարտի 9-ի №Ե-281-23, մարտի 23-ի Ե-350-23 և ապրիլի 19-ի №Ե-501-23 գրություններով դիմել է Հանձնաժողով՝ հայտնելով, որ Ընկերությանն է դիմել «Ռենշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը և նշել, որ իրեն համապատասխան տարածքում կառուցապատում իրականացնելու իրավունքը տրամադրվել է նախատեսված ժամկետից ավելի ուշ, այն է՝ 2022 թվականի մարտի 28-ին, որի արդյունքում չի հասցրել ապահովել նոր ենթակայանի համար անհրաժեշտ շինության կառուցումը: Ելնելով այն հանգամանքից, որ նոր ենթակայանի համար տրամադրվող գույքը գտնվում է կառուցման ենթակա բազմաբնակարան շենքի ավտոկայանատեղիում, այդ շենքի ավարտական ակտի ձևակերպումից և պետական գրանցումից հետո միայն հնարավոր կլինի ապահովել նոր կառուցված ենթակայանի համար անհրաժեշտ գույքի օտարման գործարքի կնքումը, ուստի խնդրել է նոր ենթակայանի կառուցման ու Ընկերությանը հանձնելու ժամկետը երկարաձգել մինչև շինարարության թույլտվության վերջնաժամկետը: Նշվածով պայմանավորված՝ Ընկերությունը դիմել է Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետի երկարաձգման համար,

դ) Հանձնաժողովն, առկա փաստական հանգամանքների ուսումնասիրության հիման վրա, գտնում է, որ Որոշմամբ ամրագրված ժամկետը ենթակա է երկարաձգման Ընկերության կողմից հայցվող ժամկետով, և

հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 28-րդ հոդվածի 2-րդ մասը, 33-րդ, 34-րդ հոդվածները և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 2-ի №294Ա որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում «30 ամսվա ընթացքում «Ռեգիոն Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից» բառերը փոխարինել «մինչև 2025 թվականի մարտի 28-ը» բառերով:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն

ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2023 թվականի մարտի 10-ից ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- մայիսի 2023թ.